ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-86

«18» 05 2018թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունված որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2018 թվականի N 7 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ , 5-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Արտավազդ Ավագյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչ Արտավազդ Ռաֆիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Ոսկեհատ համայնքի Սայաթ-Նովա փողոցի 1 բնակելի տանը կից կառուցված 62,68 ք/մ արտաքին մակերեսով ինքնակամ շինության /ներքին մակերես՝ 32,7 ք/մ բնակելի տուն, 20,9 ք/մ ծածկ 39,57ք/մ պահեստ 2,21 ք/մ պարիսպ սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է 64,000 / վաթսուն չորս հազար / ՀՀ դրամ:

3.Բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Սայաթ-Նովա փողոցի 1 բնակելի տուն:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել Արտավազդ Ռաֆիկի Ավագյանին սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

20 18թ. մայիսի 15
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2018 թվականի N 8 -Ա

ԱՆՆԱ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչ Աննա Ռոստոմյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի բնակիչ Աննա Ռոստոմյանի սեփականության իրավունքով պատկանող 0116-0010 կադաստրային համարով 0.2 հա վարելահողին կից նրա կողմից փաստացի ավել օգտագործվող 0.088 հա վարելահողը ճանաչել Աննա Ռոստոմյանի սեփականության իրավունքը:
2. Գյուղատնտեսական նշանակության 0.2 հա վարելահողին կից, ի սկզբանե Աննա Ռոտոմյանի կողմից փաստացի ավել օգտագործվող, 0.088 հա վարելահողը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԵՐՍԻՅԱՆ

2018թ. մայիսի « 15 »
գ. Ոսկեհատ